

rev. Père G. Kalemkérian Michitaris
tengasce № 4
du Journal
Vienne
unk
rma

ՊՈՒԼԿԱՐԻԱ
ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տարեկան 8 Ֆր.
Վեցամսեայ 4 Ֆր.

ԱՐՏՆԱՆԱԶՄԱՆ

Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 Ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. Տօլ.
Վեցամսեայ 1. Տօլ.

ԿԱՆԻՍԻԿ

ԵԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ

20 ՄԵՒ.



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐԱԹ ՕՐԵՐ

Гедакция №

Вестникъ

«Нравуи»

Варна

Գրողները եւ լեզուագիտները

ՉԵԿԱՅԻՆ

Կը խնդրուի մեր բաժանորդներէն որ այլեւ իրենց բաժնեգիրները շրջեն, նկատելով որ մեր ներկայ տարեշրջանի ութերորդ ամիսն ալ լրացաւ իսկ անցեալ տարունէ պարտք ունեցող մեր բաժնորդներուն ալ բնաւ չենք ներքեր որ յապաղեցնեն վճարումը:

ՊԱՏՐԻԱՐԷԸ ԿԸ ԴԱԻԷ

Մենք առ Ս. Պատրիարքն ուղղեալ բաց նամակաւ մը ցոյց տուած էինք Նորին Սրբազնութեան գիրքին ու կուսովին անհամապատասխան վարմունքը եկեղեցիներու բացի գոցի խնդրոյն մէջ. կը ցաւինք որ անկէ ի վեր անցած աւ 40-50 օրերու մէջ Դուրեան Պատրիարք միւսնոյն խախտուաւ եւ իր պաշտօնին հակասող կեցուածքը կը շարունակէ: Պոլսոյ օրաթերթերէն կ'իմանանք թէ Պատրիարքը առաջարկեր է համերաշխութեան համար հրաւիրած 30ի չափ ոչ-կուսակցական Ազգ. երեսփոխաններուն որ եկեղեցիները բաց ըլլալու համակերպին: Այս առաջարկը Դուրեան Պատրիարքին կողմէ մեզ և շատերու զարմանք և զայրոյթ միանգամայն կը պատճառէ:

Կը մղուինք հարցնել Ս. Պատրիարքին թէ, դուք չէիք որ Ազգ. ժողովոյ նախագահական արժանի վրայէն վճռաբար գոչեցիք թէ «Վեհ. Կաթողիկոսին կոնդակը ՀՐԱՄԱՆ մըն է ուստի չեմ թոյլադրեր որ վրձնաւորութեան չեմ թոյլադրեր»: Հապա այսօր ինչպէս ենթարկուի: Զեզ թեւադրել Ազգին թոյլ կուտաք Ձեզ թեւադրել Ազգին ոչ-կուսակցական երեսփոխանները որ, հակառակ Կաթողիկոսին հրամանին, եկեղեցիները բաց ըլլալու համակերպին: Սրբազան հայր, Ձեր այս վարմունքը ձեր երէկի յայտարարութեան գլխովին հակասական ըլլալէ աւելի Ձեր հոգեւոր պետին դէմ ըմբոստացում մը և Անոր ու Ձեր պաշտօնին, դէմ դաւադրութիւն մը չէ միթէ: Ձեր Պատրիարքական պաշտօնին դէմ, կըսեմ, որովհետեւ Դուք Թուրքիոյ Հայոց գերագոյն ժողովին որոշումները գործադրելու, այդ ժողովին որոշումները գործադրելու և գործադրութեան վրայ հաւատարմարար հակելու ուխտը ըրած էք իսկայսօր դուք էք որ կը դաւադրեք անոր դէմ:

Սրբազան հայր, դուք տեսաք որ հայ ազգը, չնչին բացառութեամբ մը, Վեհ. Կաթողիկոսին հրամանը և Ազգ. Երեսփ. ու վարչական ժողովներուն

որոշումները յարգելու և գործադրելու կողմն է. ա'լ ինչ բան Ձեզ կը հարկադրէ, հակառակ ասոնց, չնչին փորձամանութեան կողմին տաշելու: հակասելով դուք Ձեզ, դաւելով Ձեր պետին հրամանին և ազգ. գերագոյն ժողովներու որոշումներուն դէմ: Մի գուցէ Դաշնակցութեան կողմէ Զմիւռնիոյ մէջ գործուած եղբայրասպան ոճիւրդ Ձեզ անարեւելած ու խելայեղ ըրած ըլլայ: Բայց չէք խորհիր թէ ձեր այս նոր ու դաւադրական վարմունքով ամբողջ Ազգը զայրացուցած և հանրութեան կիրքերը գերագրգռած կըլլաք, քանի որ այդ կերպով աւելի կը քաջալերէք վարկաբեկ խմբակի մը անասնձ ընթացքը ու յոխոյտանքը:

Թող ներուի մեզ ըսել թէ այս խնդրոյն մէջ սկիզբէն ի վեր Ձեր ցոյց տուած վարանտութիւնն էր գլխաւոր պատճառը Զմիւռնիոյ կրկնակի ոճիւրդի և կը վստահեցնէ թէ այսօրուան Ձեր վերջնական ու դաւադրական վարմունքը մեծագոյն ոճիւրդնու դուռ պետի բանայ. որովհետեւ հայ ժողովուրդը երբեք տրամադիր չէ լքելու իր վերահաս հայրապետը և իր գերագոյն ժողովը: Իրենց Եղանակին վրայ «ամէն գնով» յամառել յայտարարող ծանօթ մէկ քանի խռովարար շեմերուն դէմ «մենք ալ ամէն գնով» ըսողը գրեթէ ամբողջ հայութիւնն է: Ուրեմն փոթորիկ մըն է որ պիտի անցնի. իսկ Դուք իբրեւ ճարտար զեկավար գիտցէք պիտի կաշի Ձեր վարել կոչուած նաւու զեկին և տեղի չիտալ աննշան աղիքներու: Վստահ եղէք ժողովուրդի ուժին վերայ:

Յ. Պուրպիր

ԱՆՈՐԱԿԵԼԻ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Չ'գիտեմ կա՞յ օարդեօք ուրիշ քօղաք մ'ալ ուր ազգային հանգամանք ունեցող խնդիրներու շուրջ այնքան հրաքոքորեալ և այնքան բուռն պայքար մղուած ըլլայ որքան հոս Վառնայի մէջ: 95 96 ի ցաղթականութեան հոսանքէն ի վեր Վառնան հանդիսավայրը եղած է ամեն տեսակ կուսակցական փոթորկալի կուռնեան, թաղականի հոգաբարձուի յուզումնալից վէճերու, տեղացիի և գաղթականի անվերջ բանակը ունենալու ևն, ևն, որոնք յառաջ եկած են միշտ ժողովուրդը առաջնորդողներուն հետեւած ետաւ մալ և ձախաւէր ուղղութեան: Այդ կուռնեանը ու հակառակութիւնները ցարք ոչ միայն հասա-

րակութեան օգուտ մը չ'են տուած այլ ընդհակառակը ժողովուրդը զանազան հետեւածներու բաժնած և իրարու դէմ առեւտրութեամբ զինած ըլլալով միշտ վնասակար եղած են:

Նայել այդ գրգռութիւնները, անհասկացողութիւնները անշուշտ մեծ դեր են ունեցեր մեր ազգային ու ընկերական կեանքի յոռի գրգռութիւնը ստեղծուելուն և մեր Ազգային նախակրթարաններու այսօրուայ անբարեկարգ վիճակին մէջ մասնաւոր: Սակայն է ըսել որ ա'լ երեսները ինչ իսկ ամենակարգ կեդրոններու մէջ այս տխուր իրականութիւնը աւելի կա՞ պակաս համեմատութեամբ միշտ միևնոյն գոյներով կը ներկայաւան:

Մի քանի տարիէ ի վեր հազիւ թէ սկսած էին մտքերը հանգարտել, կիրքերը թեթեւալ իրարու դէմ ունեցած առեւտրութիւնները մոռցուիլ և կ'սկսէր կամաց հասարակութիւնը կընտելանար համերաշխ ոգով ընդհարող ազգային հաստատութիւններու և ազգօգուտ ձեռնարկներու շուրջ, ցաւալի է ըսել անսպասելի կերպով կրկին ելեան եկան ժողովուրդի մէջ մտքերու գրգռում մը, անհասկացողութիւնէ յառաջ եկած խռով հակառակութիւն մը, որոնք ազգիւնքն են դարձեալ ազգային վարիչ մարմնի մը, թաղականութեան հետեւած քմահաճ ու ետաւսէր քաղաքանութեանը:

Նոր, ընտիր թաղականութեան պաշտօնի ձեռնարկելէն քիչ ժամանակ վերջ յաջորդաբար հրապարակ եկան երաժիշտ ուսուցիչի լուսարարի և ազգային խանութի մը վարձու տրուելու խնդիրները, որոնք ըստ երեւոյթին ոչքան աննշան նոյնքան սակայն գաղթականացուցիչ են իրենց կամայական և հակաժողովրդական արարքի հանգամանքներով:

Երբ ազգային մարմին մը երօթիչ տիպի պաշտօնէն վստայութի մասին տուած անարդար որոշումի մէջ մերժէ ժողովուրդին միասին բարեխոսութիւնը և առաջարկած ժողովականութիւնը, ոչ միայն կարհամարէ նոյն իսկ

3-400 ազգայնաց ստորագրութիւնը կ'ընդ ներկայացուած խնդրագիր մը, այլ և դատապարտելի ետամուրթեամբ մը, գրգռութիւն առիթ տալուն հետեւածը հրաժարած լուսարար վերստին պաշտօնի կոչելով ժողովուրդի քիչ խնդալու չափ յառաջ կերթալ, սա պարզ առեւտրութեամբ թէ ժողովուրդը իրաւունք չ'ունի թաղականութեան գործին խառնուելու, Այդ պարագային հասկանալի և շատ բնական է արհամարհած հասարակութեան գրգռումը և ա'լ որ բարձրացուցած արտոնջի, բողոքի ձայնը:

Ոչ պարտնեցող ժողովուրդը երբեք չուզեր ձեր գործերուն խառնուել և ոչ ձեր իրաւունքներէն իրենց մէջ ոտնձգութիւններ ընել, նա կը պահանջէ ձեզի՝ միայն ազգային շահերու պաշտպանութիւնը, բարեկրթութիւն և բաւականաչափ յարգանք դէպի ինքը:

Եթէ թաղական աղաներու հասկացողութեամբ ժողովուրդին ազգական կալութիւնները չափազանցած են, եթէ հարկէր անոր զայրոյթի ձայնը լռեցնել, եւ կը կարծեմ որ սօփստներու ու ոտականներու օժանդակութեանը դիմելէ կա՞ ազգային անհատներ իբր խռովարար կառավարութեան մատենէ անարեւի ճամբայ մը կ'սկսել էր գտնել:

Իսկ հասկանալու համար ի՞նչ դժուարութիւն կ'ար, բաւական էր մի քիչ բարեկամացողութիւն ունենալ և ահա վոլտադարձ գիշողութիւններով կարելի էր ժողովուրդի յուզումներուն և անկէ յառաջ գալիք շարքներուն առաջը առնել: «պիտի արապ իշխան Կրապիստան եւսըլմազ» կըսէ տաճկական առաջն: Հանրային գերագոյն շահերու սիրոյն համար դուք պիտի զոհէիք Լուսարարը, նոյն իսկ եթէ անիրաւութեն գրուած ըլլար այդ պահանջը, որովհետեւ ձեզ համար աւելի կարեւոր էր ժողովուրդի համերաշխութիւնը քան ու է անհատի մը եղած զրկանքը: Չ'գտնեցա՞ւ որեօք թաղականութեան եօթը անգամներուն մէջէն գոնէ մէկ

հատ խզմամբ և չըջանալու ց
մարդ որ հասկցնէր այս ճշմար-
տութիւնը իր պաշտօնակիցնե-
րուն:

Պէտք է գիտնալ թէ հանրային
գործերու մէջ այս օրինակ թե-
թեւամիտ ռիսկաւորութեամբ ոչ մի-
այն մարդ ածան գնով ձեռք բե-
րած ժողովրդականութիւնը կը
կորսնցնէ, այլ և իր անհատա-
կան կեանքի մէջ շահած քիչ
չատ լաւ համբաւէն ալ բան մը
վրայ կուտայ:

Համայնքի մը վարչական մարմ-
նի մէջ գտնուող մարդոցմէ կը
պահանջուի՝ անխորհուրդ մեծա-
մտութենէ և յամառ կամայա-
կանութենէ աւելի ունենալ քիչ
մը լայն հայեացք և աւելի լուրջ
ու հեզ վերաբերում դէպի այն
հասարակութիւնը, որուն ձայնով
իրենք ընտրուած են. այսպէս
կատարեալ պատուհան կը դառ-
նան անոնք այդ ժողովրդի դը-
խունը կը շուարեցնեն զայն և այդ
շուարեմը շուտով կը փոխուի ընդ-
հանուր անտարբերութեան հան-
դէպ: Բոլոր ազգային գործե-
րուն:

Փափաքելի էր որ օրուան թա-
ղականութիւնը ուզեր ունեն-
դնել մեր անկեղծ դիտողութիւն-
ներուն ու թեւադրանքներուն,
իսկ եթէ օգտուելով իր ձեռքը
անցուցած ազգային իշխանութե-
նէն կը յամառ անպայման տի-
րապետել ու բռնանալ ժողովուրդի
կամքին վրայ, կառավարական
անտեղի միջամտութեան պաշար-
նած կուգէ խղ եւ անոր բողոքող
ձայնը որպէսզի իր եսի յաղթա-
նակը ապահովցնէ. պէտք է մտա-
բերէ թէ Համարեան արհաւիրք-
ներն իսկ անբաւական եղան այդ
միւսնոյն ժողովուրդին մէջ բռն-
կող արդար զայնոյթը կասեցնե-
լու թող չ'մոռնայ թէ իր նա-
խորդներուն մէջ ալ գտնուած են
նոյն ուղղութեամբ քրոշներ որ-
ոնք վերջի վերջոյ ստիպուած
են հզօրեւեռ հանրու տեղատա-
րափին տակ ըջուրի ասպարէզէն:

20 Օգոստ. 1910

Վառնա

Սեֆ0

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԹԵ ԲԱՂԴԱԽԱՂ

Մեր կուսակցականներուն նա-
յելով, եթէ Հայեւոս հարուստ ազ-
քոտ ժամանակին քաղնիս իրենց
առջևը բացած իշխանիք, շատ
արդիւնաւոր բաներ ըրած պիտի
ըլլային: Այս միամիտ խօսքը
միտքս կը բերէ այն տգէտ, ան-
դաստիարակ և կեանքին մէջ ու
է գործ մը չուսումնասիրած մար-
դիկը, որոնք կը բացազանչեն
ւախտուր ինծի հազար ոսկի
նայէ ես ինչ գործեր կը դարձ-
նեմ, կամ միտքս կը բերէ այն

տխմար դերձակները, որ ձեռքի-
տութեան հոգին չի գիտցած,
զայն լաւ մը չի սարուած վար-
պետի մը պէս կեղևն խանութ
կը բանան ու երբ չի հաւնուիր
իրենց շինած անշնորհք զգիստ-
ները՝ կըսկսին ըսել պէտք ապար-
այդ բարայով ատկէ աւելին չի
չինուիր: Երբ ինծի գօթութիւն
50 ֆրանք տէ ես քեզի զգիստ
մը չինեմ ու նայէ քուկին էջրօ-
բայիդ մէջն ալ ատանկը կրնան
մի չինել: Մեր կուսակցական-
ները իրենց զանազան Շահրիկ-
եաններովն ու Վառնաներովը՝
բնաւ չեն տարբերիր այս տգէտ
ու տխմար դերձակներէն: Իմ
կարծիքովս եթէ կուսակցական-
ներու փափաքին համեմատ Հա-
յեւոս հարուստ աղքատ ունեցած-
նիս իրենց տուած ըլլայինք, ա-
պահովաբար թուրքիոյ մէջ հա-
յուկիւնը մինչև հիմակ բնաջինջ
եղած կըլլար, այն եղական պատ-
ճառով որ առողք աչդ ունեւր
ոչ ու ի՞նչ եղանակաւ գործածելը
չէին գիտել: Ենթադրեցէք պահ
մը մարդ մը որ տարիներու համ-
բերաբար տքնութիւններով ու
խնայութիւններով ձեռք բերած
հայտնութիւնը ելնէ ամբողջովին
տայ իր զաւակին որ ու է կա-
նոնաւոր կրթութիւն, դաստիա-
րակութիւն չէ առած, ու է բա-
նի մը վրայ հաստատուն հմտու-
թիւն չէ ստացած-ինչպէս են մեր
կուսակցական բոլոր գործիչներն
ալ-ի՞նչ կըլլայ կը կարծիք այդ
հարստութիւնը՝ աւելորդէ ըսել
թէ երկու անգամ երկու չորսի
պէս մոխրի (քիւ) Մեր կուսակ-
ցականներուն ամենամեծ ոճրա-
գործ յիմարութիւնն այն եղած
է որ, անոնք յեղափոխութեան
ուղիդ և ապահով ճամբաներէն
չի քալեցին, վասնզի, այդ ճամ-
բան թէ և ուղիդ և ապահով բայց
չունեալից չէր, որով իրենց ա-
նապարող փառասիրական փա-
փաքներուն ու տենչանքներուն
չուտով գոհացում չէր կրնար տալ:
Այս մարդիկ նման խաղամուր ու
չահաւատ («բէքիւնի») վաճա-
ռականներուն, որոնք վաճառա-
ակութիւն անունին տակ պար-
զապէս բազմախաղ կը խաղան
ողգին առածներն վիճակահա-
նութեան բրոմէսներու կամ խաղի
թղթերու վրայ դնելով վատնած
են, սա զանազանութեամբ որ
խաղամուրները թղթին վրայ դրած
կը դնեն իսկ կուսակցականները
տասնեակ հազարաւոր հայերու
կեանքը: Պապը Ալիի ցոյց, Պահ-
րի բաշայի սպաննութեան փորձ,
Պանգի ցոյց, Խանասորի արշա-
ւանք և ալն պարզապէս բազմի
խաղեր էին և ոչ թէ լուրջ և
մտածուած հաշիւի մը վրայ հիմ-
նուած գործեր:

Գառնիկ Գ. Մազմանեան



ԳՕԼԵՐԱՅԻ ԴԵՄ

Գօլէրայի վարակուելու դէմ հե-
տեւալ ապահովիչ ծանօթութիւն-
ները և միջոցները կը յանձնա-
րարենք մեր ընթերցողներուն:

Ասիական Գօլէրան որ այժմ
Ռուսաստանի շատ մը նահանգնե-
րուն մէջ բազմաթիւ զոհեր կը
տանի և կը սպառնայ չըջալկա-
յերկրներուն ևս, բնաւին աննը-
մարելի մանրէներէ (միգրոս) ա-
ռալ կուգայ, կաթիլ մը ջուրի
մէջ կրնայ միլիոնաւոր մանրէ-
ներ գտնուիլ:

Այդ աննշարելի մանրէներէն
գօլէրայի ժամանակ չը միասուե-
լու համար պէտք է խմել եռա-
յուած ջուր կամ թէյ, իսկ կա-
նաչեղէն ու մրդեղէնները չեփած
կամ եռացած ջուրով չի լուացած
պէտք չէ ուտել: Նաեւ ուտելէ ա-
ռալ եռացած ու տաք ջուրով
լաւ մը լուանալու է ձեռքերը:
Հում ուտելիք չի գործածել:

Աւելի շուտ կը վարակուին այն-
պիսիները որ ունեն աս-
տիքաւ տկարացած է անսնունդ և
անմարտելի ուտելիքներով կամ
ոգելից ըմպելիներով: Պէտք չէ
չատ պաղ կերակուր և ըմպելի
առնել, մանաւանդ քրտնած ժա-
մանակ:

Առաւօտները նախաճաշել յի-
տոյ դուրս ելլելու է: Մտելէ զգու-
շանալու է, գետնի վրայ պէտք
չէ քնանալ և քրտնած լոգանքը-
նել, որովհետեւ ու է պատճա-
ռաւ հիւանդացած մարդիկ աւելի
դիւրուութեամբ կը վարակուին գօ-
լերայէ:

Գօլէրան կեղտոտ թաղերու
և բնակարաններու մէջ շուտ կը
տարածուի: Ուստի տուններու և
բակներու մէջ կուտակուած աղը
պահելու չէ, արտաքիններու և
փոսերու մաքրութեան խնամք
տանելու է, ապանելիք դեղա-
չուրեր որակելու է:

Ճանճերէ զգուշանալու և դա-
նոնք ընշելու է, որովհետեւ ա-
նոնք կրնան վտանգաւոր ման-
րէները տեղափոխել: Ուստի կե-
րակուներուն երեսը ծածկել կամ
անգամ մըն ալ եռացնել վերջ
ուտել պէտք է:

Գօլէրայէ վարակուած ըլլալու
նշաններն են, փորլուծութիւն
ջրալի, խուլ փոխել, ցաւեր ստա-
մոքսի մէջ, գլխի պտոյտ, յետոյ
ոտքի և ձեռքի շղաձգութիւն-
ներ, այս նշանները երեւալէ վերջ
կը սկսի հիւանդին երեսը կա-
պոյտնալ մօրթը պաղիլ և ընդ-
հանուր թուլութիւն:

Վերի առաջին նշանները երեւա-
լուն պէս պէտք է բժշկի կանչել
և մինչև անոր գալը հիւանդը
անմիջապէս առանձին սենեակի
մէջ դնել: 1-2 դգալ գերչակի
մէջ խմցնել, փորին վրայ դնել
առաքի մը տարցած թեփ կամ
վարսակ կամ թէ մոխրի ամրա-
նալու համար քիչ մը օղի տալ:

տաքցնելու համար կաշին չփել
չոր կտաւով մը կամ օղիով թեր-
շած լաթով մը և երկու կուշտերը
շիշեր շարել եռացած ջրով, ու-
տելու համար կարելի է տալ խա-
շած ցորեն ջրալի: Թէյ կիտրօնով
և եռացած ջուր:

Գօլէրայէ հիւանդացած մը
դարմանելու ամէնէն ապահով մի-
ոցը հիւանդանոց փոխադրելն է
որով տենցիներն ալ կապահովուին
վարակուելէ:

Հիւանդին շունչէն կամ անոր
պառկած օտնեակի օդէն վտանգ
չկայ, բայց անոր խուխէն փա-
խուքէն և կղկղանքէն լա-
թի մը կամ կոշիկի վրայ եթէ
ցայտէ ու ձեռքով դպչուի պէտք
է լուար, տաք ջուրով օժառով
կամ կրի ջրով, եթէ ոչ վարա-
կուած անխուսափելիէ՞րէ թէ: Հի-
ւանդին փոխուքին, խուխին կամ
կղկղանքին վրայ պէտք է ցա-
նել կրի ջուր կամ մոխրի կամ ա-
ւաղ: Հիւանդին դպած բոլոր լա-
թերը և առարկաները պէտք է
ապանել (ոճղէն ֆէգցիտ)՝ կամ
ջուրի մէջ եռացնել որպէս զի
վարակը ոչնչանայ:

Գօլէրայի դէմ պատուաստը է՝
ապահով միջոցն է չի վարակուե-
լու ինչպէս է ծաղկախտի պատ-
ուաստը այդ հիւանդութեան դէմ:
Քաղաքապետութիւնները պէտք
է խնամտ գտնուին կասկածելի
ժամանակներու մէջ Գօլէրայի
պատուաստումի մասին, ինչպէս
կընեն ծաղկախտի պատուաս-
տին համար:

ՆՈՐ ԳԻՒՏԵՐ

ՏՕԲ. ԷՐԼԻՈՒ ԳԻՒՏԵՐ

«Իրաւունք»-ի նախորդ թիւերէն միւսն
մէջ խօսած էինք Պրանիւթի բրօք-
սէօրներէն Տ. Էրլիւի մէկ նոր գիւտի
մասին, որ Պրանիւթը ամենակարճ
միջոցը մը մէջ բժշկելու սահմանու-
ած է:

Թէպէտ բժշկներէ ոմանք այդ եղի
աղբեցութեանը նկատմամբ մեծ թերե-
հաւատութիւն ցոյց կուտան, բայց ք
այնպէս բժշկական աշխարհը ոչ միայն
չէ դադրած անով զբաղուելէ, այլ
ընդհակառակը այդ փառաւոր գիւտի
մասին օր քան օրէ անոր հետաքրքրու-
թիւնը աւելցած է: Արդարեւ զանազան
հիւանդանոցներու մէջ Էրլիւի մէթօ-
տով եղած փորձերը կը հաստատեն ա-
նոր ունեցած հիւանդի աղբեցութիւնը:
Միայն Բրանիւթի հիւանդանոցներէն մէ-
կին մէջ տեսնուած է աննպաստ երկ-
րորդական աղբեցութիւն մը, որը սա-
կայն ի վերջոյ հասկուած է թէ անոր
պատճառը այդ առիթի գործածուած
գիւտերու անսաքրութիւնն է: Հոն ուր
Էրլիւի հրահանգներու համաձայն և
բաւականապէս խնամք կատարուած
են ներարկումները, ոչ մի երկրորդա-
կան անգամ երկուրթ յառաջ և
կած է:

Այդ գիւտի տեսական աղբեցութեանը
մասին շատ մը բժշկներու ցոյց տու-
ած սկեպտիկութեան պատճառը այն է
թէ հիւանդին կազմին մէջ Էրլիւի մե-
թոտով եղած ներարկումները թէպէտ
չուտով կանխատեսեն ախտի նշանները

և հիւանդին ընդհանուր վիճակին մէջ զգալի բարեկեցութիւն չունի, որ բերնի սակայն աւելանալով կարծ ժամանակի մէջ հիւանդին հիմնադրապէս բժշկուած ըլլալուն ոչ ոք կրնայ ապահով ըլլալ: Յայտնի է թէ մինչև այժմ ի գործ դրուած միջոցներով, այսինքն անդիկի բաղադրութիւններով եղած կանոնաւոր դարմանումներէ վերջն ալ նոյն արդիւնքը կարելի կըլլայ ձեռք բերել: սակայն հաւանական ապագի նուազեցումներէ վերջը կրկին արեան մէջ ֆրանկոսիտի մեքրոպիները որոշ չափով գոյութիւն կունենան, որոնք մի քանի տարի վերջ և կամ անկանոն կենցաղավարութեան մը հետեւեալ, վերստին կանգնել և պատճառ կըլլան հիւանդութիւնը աւելի համեմատութեամբ երևան գալուն:

Հետևապէս երկար տարիներու ուշադիր հետազոտութիւններով ու փորձառութիւններով մշտն կարելի պիտի ըլլայ վճռականապէս ըսել թէ էլիւրի մէթոտով եղած բուժումը հիմնական է կամ ոչ: Եթէ ստուգուի անոր ճշմարտութիւնը, այն աստի իրաւամբ էրկիւրի անոնք մարդկային բարեկեցութեան շարքին մէջ կարեւոր տեղ մը պիտի բռնէ: Իրեն նախանձառ արհեստակիցներէ ու մանք Ֆրանքֆուրթի այդ մեծ գիտնականին համբաւը կոտրելու պարտական է, փորձեր են այդ գիտնական վերագրել իւր օգնականին՝ Ճոքոնայի Տր. Պաթարի հետազոտութիւններուն, սակայն այս վերջինը ուղղամտութիւնն ունեցած է բացարձակապէս հերքել այդ գիտնականութեան տարածականութիւնները:

Է Տ Ի Ս Օ Ն Ի Ն Ո Ր Գ Ի Ի Տ Ը

Ամերիկայի թերթերուն գրածին նախելով թէ՛ Բոսնի, ֆոնօկարֆի և ուրիշ բնագոտիներէ բերանակարգ գործերու հնարիչ հռչակաւորն էրիտոն, այս անգամ կրկին հրապարակ կուգայ իւր նշանաւոր ուրիշ մէկ գիտնական, որ ոչ նուազ հերքերը թերթին յառաջ կը բերէ:

Թոմաս Էրիտոն յաջողած է եղեր գտնել կատարելագործուած ֆոնօկարֆի թիթիկայ տախտակի մը քննմամբ օկրաֆի ծաղաւնի հետ միացնելու միջոցը, որով կարելի է եղեր արտադրուող ներկայացուած գանազան առարկաներու և մարդոց չարժուէնքներուն հետ միասին մեքենայական որոշ ծախքին ու խօսակցութիւնները կամ երգեցողութիւնները են:

Այդ գործիքը զոր էրիտոն Բիւնքո-Ֆոն անունով միջոցած է, թէպէտ վերջնականապէս չէ լինած բայց անոնք որ բաղադրութիւնն են ունեցել աւելորդ աշխատանքին մէջ փորձերուն ներկայ գտնուիլու, կը հաւաստեն թէ մարդոց բերանները, չարժուէնքը, գործիքի հանած ծախքերու աստիճանին կատարելապէս կը համապատասխանեն և անոնց ծախքը յստակօրէն կը լըսուին: Օրինակի համար, կը տեսնուի ատաղձագործ մը որ կաշխատի և ուրուն ըրած չարժուէնքներուն համաձայն յաջորդաբար կը լսուին զարնո ող ու ըրազի ծախքը: Կըլտուի երգչուհի մը երգելու ծախքներուն երեւելիքը բոլորովին ներգայնակ իւր ըրած չարժուէնքներուն, կամ նաւահանգիստը մտնող չորեքանի մը սուրկու և երկաթ նեւ տեղու շունդիւր ծախքին շատ բնական կերպով:

Էրիտոն մտադիր է եղեր իր հնարած այդ նոր գործիքի միջոցաւ ներկայաւ լինել հանրածանօթ դերասաններու կողմանէ խաղուած շատ յայտնի բիւթի մը տեսարանները, անոնց խիական

խօսակցութիւններու, երգերու և նուազի ամբողջութեամբ: Եւ եթէ այդ փորձերը իրապէս յաջողութեամբ պնդակուն: տարակոյս չ'կայ թէ ամեն ոք հնարաւորութիւն պիտի ունենայ քաղաքակրթեալ աշխարհի ամենատաղանկարգ թատոններու մէջ ներկայացուած խաղերը տեսնելու ու անոնց տաղանդաւոր դերասանները կամ երգչները լսելու:

Ս. Գ.

Օ Դ Ա Յ Ի Ն Մ Ա Ր Տ Ա Ն Ա Ի Ե Ր

Գերմանիոյ մէջ կոմս Զէյլըն Յուսիսն օդանաւի առաջին կանոնաւոր երթևեկութիւնը հաստատեց, մէկ քաղաքէ միւս քաղաք 6 վճարող ճամբորդ փոխադրելով (300 մղոն հեռու): Այժմ պետութիւնները սկսած են պատերազմի գործածելու համար օդանաւի պատրաստութիւն տեսնել, Իտալիոյ երեքով. Ժողովը 6 միլիոն ֆր. քուէարկեց օդանաւեր շինելու պատերազմի համար, Գերմանիոյ մէջ ալ այդ նպատակաւ ընկերութիւն մը կազմուած է:

Վ Ե Ր Զ Ի Ն Մ Ա Ր Դ Ա Հ Ա Մ Ա Ր

Գերմանիոյ վիճակագրութեան սենեակը հրատարակած է իւր վերջին տեղեկագիրը աշխարհի մարդահամարին նկատմամբ, առիթ կը հասկցաւ թէ 1909 տարւոյ վերջը աշխարհի բնակչութեան ամբողջական թիւն էր 1544, 540,000: Ասանք հետեւեալ կրօնքներուն կը բաժնուին:

Գրիստոնեաներ	534,940,000
Կոմիւնիկոսեաններ	300,000,000
Պրահմաններ	214,000,000
Մանմուսկաններ	175,290,000
Պուտոսայականներ	121,000,000
Հրեաներ	10,860,009
Հեթանոսներ և մանր	188,420,000
Երանդանութիւններ	1,544,540,000

Կ Ո Վ Կ Ս Ս Ե Ա Ն Լ Ո Ր Ի Ե Ր

Վերջերս Կովկասի կառավարութիւնը վերսկսած է ամենախիստ ընթացք բռնել այն հայերու դէմ որոնք ո՛ր և է կերպով օգնած են Դաշնակցութեան: Ռուս կառավարութիւնը ձեռք անցուցած է բազմաթիւ թուղթեր տետրակներ և ցուցակներ որոնց մէջ նշանակուած են դաշնակցութեան կամուրջ կամ ակամայ դրամ տուողներու անունները այս պարագան մը այն Տփլիսի մէջ քանի մը հարիւր հայերու ձեռքակալութիւնն պատճառ եղած է: Նոյնպէս գաւառներու ու գիւղերու մէջ կը հաւածուին կասկածելի Հայերը, Իսրայէլ գործական ու կրթամիտական ընկերութիւններն խիստ ծակղուծեան են: Թարկել սկսած են և խափանել կրթական:

Տեղական թերթերուն արգելուած է խօսուածքանց մասին գրել նաև մուտքը արգելուած է սօսիալիստական և յեղափոխական թերթերու: Բայց պետք է աւելցնել թէ ռուս ընկերակարական և յեղափոխական կազմակերպութիւնները ալ նոյն խօսուածքանց ենթակայ են:

Յեղափոխական կուռներու ժամանակ Սատտար իմանի բանակին մէջ կուռող ուժաւոր Եսայի որ իր հայրենիքը Տփլիս վերադարձեր էր, ուստի կանոններն կասկածուելով իւր անխնայական թէրօրիսթ, գրառաչորթ ձեռքակալուեցաւ և 8-10 օր հարցաքննութեան համար շարունակ ծեծուելով:

ուստի կանոնաւոր մէջ, մահամեծ վիճակի մահաճեցաւ. ուստի Միքայելեան հիւանդանոցը ղրկուեցաւ. ուր մեռաւ չուտով: Բազմաթիւ են կըսուի լիւրջերս այսպիսի դէպքեր Կովկասի մէջ. և տեղական մամուլը ազատ չէ ձայն բարձրացնելու:

Վերջին քննութիւնը հաստատած ըլլալով որ Կուր գետի ջուրը գոլէրայի մանրէներ կը պարունակէ, Տփլիսի առողջապահական խորհուրդը ծանուց բոլոր բնակչութեան և պատուիրեց որ այդ գետին ջուրը հում չի գործածուիլ:

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Մուշէն Արեւելի օրաթերթին ղրկուած թղթակցութիւնն էր կը տեղեկանանք թէ Տարօնի և զգ. Վարժարաններու ընդհանուր տեսուչ Զաւարեանի ներկայացուցած տեղեկագիրը տեղւոյն Երեսփոխանական ժողովը յանձնարարելով մը քննութեանը ենթարկած է. քննութեան արդիւնքը ցոյց տուած է թէ Զաւարեան Եփրատի կան միջոցները գործ ղենելով ժողովուրդը զգուհեցած է, որով կարեւոր բաց մը գոյացած է պիւտճէին մէջ և «Դաշնակցական սօցիալներով անհնար է կրթական տուրք հաւաքել, և ինքը, Պ. Զաւարեան, ամէն ինչ է, բայց մանկավարժ չէ և իրաւունք չունի կրթական գործի ղեկավարը հանդիսանալու, որ ինքը թափառական գործիչ մըն է և ընդունակ էր իր կուսակցութեան զանազան խառնաշփոթ գործերու գործակալաբար ըլլալու, բայց ոչ մանկավարժ»:

Ականչը խօսի հերոս Անդրանիկին. կոյր վստահութիւն մ'ունենալով Զաւարեանի վրայ, մեր արդար գիտողութիւնը արամարնել մկրտեցաւ, բայց յետոյ հարկադրուեցաւ ինքն ալ հաւաքուած դրամները Պատրիարքարան ղրկելու համակերպիլ:

Ս. Պատրիարքին նախաձեռնութեամբ ու նախագահութեան տակ վերջերս գումարուի սկսած «համերաշխութեան ժողովը» ապարդիւն եղած է. կուսակցականը վերջին նիստին չեն ներկայացած. ոչ-կուսակցական երեսփոխաններն ալ մերժած են բացարձակապէս Պատրիարքին առաջարկը եկեղեցիները քաղաքական հաւաքումներու կամ միջոցներու առջև բաց ձգելու մասին: Կը մնայ այժմ վեհ. Կաթողիկոսին դիմում ընել Անոր վերջնական կարծիքը ստանալու համար. որ չենք կարծիք թէ «Դաշնակցութիւն» ըսելով կուսակցական, սօսիալիստական և այլ մարտիներ քչել ուզող կուսակցական շեփերու ու լեզուագարներու առջև բաց թողուլ ղիշանի եկեղեցւոյ դռները:

Պատրիարքարանը կարող չեղաւ այս տարի հայ աշակերտներ ընդունել տալ պետական բարձրագոյն վարժարանները:

Տեղւոյն թաղ. խորհրդոյ անհաշտ ու սխալ վարմունքին դէմ գրուած նոր նամակներ ստացանք, որոնց չենք կարող տեղ տալ մեր սիւնակներու անձկութեան պատճառաւ:

Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան թուրքիոյ Պատգամ. ժողովը վերջացուց իր նիստերը: Տրուած որոշումները պիտի հրատարակուին ի մօտոյ: Նախկին վարչութիւնը ամբողջ կազմով տապալած է և գաւառական պատուիրակները միաձայնութեամբ մերժած են նախորդ վարչութեան բռնած ուղղութիւնը. կըսէ Բիւզանդիոն:

Տօպրիլի եկեղեցւոյն գաւիթը ձրիաբար սալարկուները վառնայաբռնակ Յ. Պ. Տէրիմէնեան եղբայրներն են, ոչ թէ Տէրբեհան, ինչպէս սըխաւմամբ գրուած էր մեր նախորդ թիւին մէջ:

Պուլկարաց Եկզարք Տէր Եօս. Ֆարաքան այցելութիւն տալով Պոլսոյ մեր և զգ. Պատրիարքարանը, սիրալիք տեսակցութիւն ունեցաւ Ս. Պատրիարք Վոք. Եփրատի յայտնիք է թէ ինչպէս խիստ շատ Պուլկարներ նոյնպէս և ընք անհոգ յուսական կրթութիւն ստացած են, յետոյ ժամանակը ըստացելով մէջ զգալով իրենց պուլկարական ծագումը ուզած են դառնալ իրենց Եկեղեցին: Դալով վէճի սակ գանուող մակեդոնիոյ եկեղեցւորներուն, Եկզարքը, ըսած է, թէ ասոնք ալ գիւղացիներու կողմէ շինուած մատուռներ են ըրբ 1000 չափ:

Սամ. կառավարութեան հետ եղած կրթական և այլ յարաբերական խընդրներու մասին Եկզարքը փափաք յայտնած է որ լոյրը Պատրիարքարանները մրացեալ գործեն. մեր Պատրիարքը՝ թուրք կառավարութեան հանդէպ զգուշ վարուիլու համար անշուշտ, տեսակ մը խուսափողական պատասխան տուած է:

Բիւզանդիոն կը գրէ հետեւեալը.

«Ս. Պատրիարքն ի մօտոյ պիտի այցելէ Պուլկարաց Եկզարքին և այդ առթիւ պիտի խօսի ազգին համար կարեւոր խնդիրներու մասին, օրինակի համար Պուլկարիոյ վարժարանաց խնդրոյն, Հայ Եկեղեցւոյ Դիպլոման յորջորջման, Պուլկարիոյ առաջնորդութեան հաստատութեան վերաբերմամբ, որոնց նկատմամբ երէկուան այցելութեան առթիւ ու է սկիսարկութիւն չեղաւ, բայց մ'ենայն աստեան ազգին և Հայ Եկեղեցւոյ համար յոյժ կարեւոր և հաւկան խնդիրներ են»:



ՏՊԱՐԱՆ «ԻՐԱՆԻՈՒՆԻՔ»

ԵՒ ՏՊԱՐԱՆԻՆ ՄԱՐԻՈՒՐ ԵՒ ԶԱՊԱՌՈՐ ԳՐԱՆԻՈՎ

ԱՄՆՆ ՏԵՍԱԿ ԳՈՐԾԵՐ

Հարսանեկան Հրաւիրագիր, Այցատոմ, Նամակագրութիւն, Պահարան Պարսամուրհակ, Հաւուերուղթեր և ուրիշ գործեր

Հայկ. Բեհ. Պոչկարեւել, Փրայնեւել և Ռուսանեւել

Մեղ դիմողներու ճաշիկին գոյացուի ալու համար Տպարանս նոր բերել տուած է ամէնալիւրջին սխտէսի գործիքներ և տառեր

ԾԱՆՁՆԱՐԱՌԹԻՒՆՔ ԿԸՆԴՈՒՆՈՒՆ ԿԱՆԿԱՎԱՐՈՎ ՄԸ

Արթ. Խորեն Ա. Բնայ. և Տիկին
Երեմիայի Բնայի և Զաւա-
կունք, Տէր և Տիկին Մարգար
Ազիզեան, Քօլօլեան, Հանրման
Ե. Մ. Յակոբեանեան և համայն
պարագայք խորեն շնորհակալու-
թիւն կը յայտենն ամեն անոնց
որոնք հաճեցան ներկայ գտնուիլ
ողբասցեալ

ԱՇԽԵՆԻԿ ՔԻՒՉԻԿԵԱՆԻ
յուզարկաւորութեան և այս տը-
խուր առթիւ իրենց ցաւակցու-
թիւնն յայտնեցին անձամբ կամ
գրով:

ՄՈՒՀԱՐԷՊԷ ԵՒ ԻՐ ԶԻՆԻՏԻՆԻ

Կիրիտ մէսէլէսի պիտ տէֆս
տահա թիւրքիա վէ Եռնանիո
տան պէյնիտէ մուհարէպէյէ սէ.
պէպ օլաճաք կէօրիւնիյօր, Հէր
իքի թարաֆտան հազրըլըզար
կէօրիւնիյէքտէ իսէտէ, համի տէվ-
լէթլէր թարաֆընտան ուլհաբէր-
վէրանէ իսթարլար տէվամ ի-
տէյօր:

Եռնան միլլի մէճիսինէ կի-
րիտիլէրտէն պէշ մէպուս ինթի-
խապ օլունմասընա Օսմանլըլար
մատտէն Կիրիտի Եռնանիստանա
պիրիշտիրմէք նազարր իլէ պու-
գարաք, մէզըիւր մէպուսլարին
Եռնան միլլի մէճիսինէ գապուլ
օլունմարըլ մուհարէպէ իլանը
պատ իտէճէքլէրինի իսթար իթ-
միշէր տիր, Պագաթ մէզըիւր
պէշ մէպուստան իքիսի էն ասըլ
Եռնանըլ օլտրգլարընտան, Կի-
րիտտէքի մէմուրիյէթլէրինտէն
իսթիֆա իթմէլէրի համի տէվ-
լէթլէր շարթ կէօթլէրիյօրլար
վէ տիկէր 3 մէպուսըն ասլա Եռ-
նան մէպուսը թանըլմայաճաք-
լարընա վէ մէճիսի գապուլ օ-
լունմայաճաքլարընա տէվլէթլէր
Օսմանլըլ հիւքի մէթիինի իգնա ի-
տէյօրլար, պու խուսուստա Եռ-
նան հիւքիմէթի տախի հէմէթ
քեար իսէտէ, էհալինին էքսէ-
րիսի անլէրի հէր հալտա մէճ-
լիստէ օթուրթմաք իտտասընտա
պուլունիյօր:

Թիւրքլէր Եռնան էհալինին
պու իտտասընը կէօրէրէք, 1897
տէ օլտըլը կիպի հիւքիմէթ տա-
խի մէճպուրիյէթ ալթընտա է-
հալինին թալէպինէ միլթապա-
գաթ իտէր շիւքհէսի իլէ շիմաի
տէն թէրթիպլի տալրանմըլ օլ-
մաք իշիւն' ասքէր վէ ճէպհանէ
որոնոր թաշըթմաքտա տըր լար
Քէզա Եռնան հիւքիմէթի աշիւր
շ'ւքէ իլէ թէսալիա սիւնորլարըն-
տա թէրթիպաթը հարպիյէտէ
պուլունիյօր:

— Կէլէն հաֆթա Եռնանիստան,
Գարատաղ վէ Պուլիարիա պէյ-
նիտէ թիւրքիայա գարշը կիզլի
պիր իթթիֆսք թէշքիլ օլընտը-
ղը շալի սլուշըլը պու հաֆ-

թա տախի թիւրք-Եռնան մու-
հարէպէսի զուհուրի հալինտէ
Պուլիարիանըն հիշ պիր հարէքէթ
իթմէյէճէկինէ տալի թիւրքիա
վէ Պուլիարիա պէյնիտէ պիր
իթիւաֆ հասըլ օլտըլընը պաղը
էվրաղը հալտաիա եազմաքտա
տըր. Ֆագաթ շուրասը պէյան օ-
լունմայօր քի' էօյլէ պիր ֆըր-
աթտան իսթիֆատէ իթմէմէք
իշիւն Պուլիարիայա նէ՝ վատ օ-
լունմուշ տըր:

— Վիէննատան եազըլտըլընա
պինտէն, Բուժանիա վէ թիւրքիա
պէյնիտէ տէվամ իտէն տօսթլըգ
Պուլիարիայա գարշը պիր իթ-
թիֆաքա թէպտիլ օլմուշ, եանի է-
կէր Պուլիարիա թիւրքիայա հիւ-
ճում իտէր իսէ, Բուժանիա տախի
Պուլիարիայըլ արգատան վուրա-
րաք, Վարնա սանճաղընը զապթա
գալգըշաճաք ըմըլ, Պագաթ պէյօյ-
լէ պիր հարէքէթ վուգուրիտէ
Բուժիա Բուժանիանըն տիզկինինի
չէքմէյի պիլէճէք օլտըլընտէ
ուլունթմամալը տըրլար:

— Թիւրքիանըն Պրանսատան
իսթիգրաղ մէսէլէսի հալլ օլուն-
տըլը Բարիստէն պիտիլիյօր:
Պրանսա էօտիւն վէրէճէկի բա-
րա իշիւն թէմինաթ իսթմէք-
տէն մատա, օլ բարանըն պիր
պէյօյիկ գըսմընա պէտէլ Պրան-
սայա սըբարիշլէր վէրմէք թէք-
լիֆ իթմիշ իտի հագգը բաշա
պու սըբարիշ թէքլիֆինի գա-
պուլ իթմիշ տիր Քէզա Օթան-
պու վիւլայէթիինի կէօրիւկ հա-
սըլաթը թէմինաթ կէօթլէր
միշ տէնիյօր:

— Բուժիաթիգհանէսի թիւր-
քիատաքի Բուժլարըն ումումմէճ-
լիսի իշիւն Բուժանիա զալարըլ ին-
թիխապ իթմիշ շուպ, մէճիսի
սեպքեմբըր 1տէ քիւշտա իտէ-
ճէք տիր, հալպու քի հիւքիմէթ
մէզըիւր մէճիսի կիտէն մէպուս-
լարը մուհաքէմէյէ չէքիւպ ճէ-
զալայաճաղընը իսթար իթմիշ
տիր, Հէր իքի թարաֆտէ գա-
րալարընտան շաշմայօրլար, պա-
գալըմ նիհայէթիինէյէ միւնճէր
օլունմաք տըր:

ՏԱԽԻԿԻՑԷ

Իկ կաղէթասընըն մուհարըրի
սապըգ միւնիսթը կէննատիէվ իլէ
կէսիւշէրէք, Մաքէթիւնիա մէսէ-
լէսինտէն տօլայը չու ճէվապը
ալմըլ տըր: — Թիւրքիա իլէ ա-
լա ուղաշաճալաճաղըլ Մէյտան-
տա պուլընան միւշքիւլաթլար
եալընըլ մուհարէպէ իլէ գալգա
պիրիքի' օնտան սօնրա պիզիմ
վաթանտաշլար րահաթ իտէպիլ
սիւնլէր, Պագաթ Չար հազրէթլէ-
րի մուհարէպէ իսթմէյօր, չու
հալտէ քէնտիսինի մուհարէպէյէ
մէճպուր իտէճէյիլ, նասըլըր Պիլ
մաք մէճպուր իթմիշ տիր Վիլ
հէմի' Պրանսայա գարշը մուհա

րէպէ իլան իթմէկէ, Պուլուն ի-
շիւն Մաքէթիւնիա գալալարըն
Պուլիարիայա կէլմէսի պիզէ ֆա-
լիտէլի տիր, Հազըլանարաք
թիւրքիայա գարշը մուհարէպէ
իլան իտէճէյիլ:

— Օն զէմանլարտա մուլթէ-
լիֆ թիւրք իսթիլլէրի վէ ա-
ժանալարը Պուլիարիատա տօլաշ-
մաքտա օլտըլարընը, վէ պու-
լար մանէվրալար սէպէպի իլէ
պուլիար ասքէրինին հարէքէթի
թէտըգ վէ թապիպ իթտիք-
լէրինի Վիշիլմա Բօշաք եաղուպ
հիւքիմէթին տըգգաթընը տա-
վէթ իտէյօր:

— Մէզըիւր կաղէթտէն Օթան-
պուլ մուլպիրի պիտիլիյօր տիր-
քի մէքէքի էրգինկեանտա պու-
լընան էինճի օրտուլըն ճիւհ-
լանմասընա վէ աճէլէթին էտիր-
նէ վէ թէքիտաշա կիթմէսինէ
էմը վէրիլտի ճու հալտէ էրմէ-
նիստան օրտուլը Պուլիարիայա
գարշը Եօլլանըլիյօր տէմէք
տիր:

— Չար հազրէթլէրի էվլէլէրի
կիւն պիրատէրի բէննա Պիլիպ
իլէ Սօֆիայա ալտէթ իտուպ, պիր
աղ գալտըգտան սօնրա միսաֆի-
լիւրինի էվլատարընը պէրապէր
ալարաք' չըմէնտըքի իսթլարը-
նը կէօթտէն կէլիլմէքլէ էսկի
Չսկարայա կիւնէճէք տիր, Մա-
լիւմ օլտըլը իւզրէ' ասքէրի մա-
նէվրալարտա էսկի Չսկարա օր-
տու մէքէքի իթթիլաղ օլունա-
ճաք:

— Եարըն Բուժուգտա բէք
պէյօյիկ պիր միթինկ ագտ ի-
տիլուպ, թիւրքիայա գարշու նիւ-
մայիշ եալմաք իշիւն պիւթիւն
Բուժուգ էհալիսի պիր գաշ կիւն-
տէն պէրու հազըլըլըզար կէօր-
մէքտէ տիր:

— Մաքէթիւնիալը Եէնի գալաք
լարըն կէրէ կիթմէլէրի իշիւն
թիւրք էլիսի վէ պուլիար հիւ-
քիւմէթի պէյնիտէ գարար վէ-
րիլտի:

— Պէյօյիկ տէվլէթլէրին տօնան
մալարը Ագտէնիլտէ Օսմանլը վէ
Եռնան սուլարընտա տօլաշմաքտա
վէ ինկիլիզ տօնանմասընըն կէ-
լիպուտա վէ Բուս տօնանմասը-
նըն Բիւէա էօնիւնտէ պուլընտըգ-
լարը թէլէկրաֆլար պիտիլիյօր
տիր, կէօրիւնտիկի իւզրէ տէվ-
լէթլէր Օսմանլը վէ Եռնան վա-
րօրլարընա տէնիլտէ թէճալիւ
զաթ իթմէկէ մէյտան վէրմէյէ-
ճէքլէր, վէ մուհարէպէ թէքար
գարատան օլապիլէճէք տիր:

Ի Խ Թ Ա Ր

Ապօնէլէրիմիլին կապէթապէ-
տէլինտէն պօրճլարընը կէօնտէր-
մէլէրի բէճա օլունուր:

«ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ»

Ժէօն-Թիւրք կառավարութեան քը-
մահաճ մէկ որոշումով Թիւրքիոյ
մէջ վաճառումը արգելուեցաւ այս գե-
ղեցիկ երկասիրութեան որ ողբացեալ
Արփիարի գլուխ գործոցն է և կարժէ
որ ամէն հայու տուն անկէ հատ մը ու-
նենայ:

Արտասահմանի մէջ Կարմիր Ժամուցի
միակ կեդրոնատեղին է «Իրաւունք»
խմբագրատունը: Կը գտնուի նաև հե-
տեւալ տեղերը:

ԳԱՀԻՐԷՏ՝ Տ. Արալ Գալէմէան
ուսկըրի ի Նան-Պալի
ԱՂԷՐՄԱՆԴՐԻԱՍ Տ. Յարութիւն Արա-
համան, Մէյտան փողոց
ՊՈՒԳՐԷՇՏ՝ Տ. Ղ. Կուրկիան
Ազգ. վարժարան
ԳՕՆՍՏԱՆՅԱՍ Տ. Սիսակ Մէլիքեան
ՊՕՍՈՆ (Ամբիկա) «Ազգ» շաբաթա-
թերթի խմբագրատունը
Գին 1 Ֆր

Վաճառու համար շատ ուղղոնե-
տուն մասնաւոր գեղջ իսկ վճարումը
բանկիկ:

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՁԱՆԻՐԷ	
ՊՈՒՏԱՅ	
Վալկօն 100 քիւ.	14.17
Արապա 15-80 լիպ.	11.20
ԱՐՔԱ	
Վալկօն 100 քիւ.	9/80 10
Արապա 45-52 լիպ.	5.90
ԵՈՒԼԱՅ 100 քիւ.	10 50/44
ՁԱՎՏԱՐ 100	10/40 30
Արապա	120
ՖԱՍՈՒԼԻԱ 100 քիւ.	23.60
ՏԱՐԸ » »	12/43
ԳՕԼՕՁ արապա 55-60 լիպ.	Եօգ
Միսիւր 100 քիւ.	11/41 30
Արապա 75 »	81 30

ՊԱՂԱԼԷ
Վաճառ քիւստանտա պագգալիյէ մալ-
էրին պու կէնքի Ֆիլաթը, ալթը ֆը-
րանք իլէ:

ԳԱՀԻԷ	2.35/2.45
Շէքիւր Էլմէքէլէ	1.04
Շէքիւր քէմիլ սանտըգ-54	
Բիւրիւն ճէնօլա չուվալը	47.
» Ինկիլիզ »	31.
» Բիւլօն »	53.
» Պիլիպ »	Եօգ
ԿԱՁ Պաթում Սանտըլը	9.40
» Թարալ »	Եօգ
ՁէՅՅԻՆ Եաղը քիւ.	1.60-1.80
ԳՈՒՐՈՒ Իւզլիւմ	Եօգ
Եռնանլըլ	6.

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

«Ի ր ա լ ու ն ք» ի խմբագրա-
տունէն կարելի է ստանալ
Հետեւեալ գիրքերը:
ՂԱՐԻՊ ԱԽՊԷՐ գին 1. ֆր
Ա.ՁԱՏ ԵՐԳԱՐԱՆ » 1. »
ԹԻԱՊԱՐՏ Ա. հատոր » 1 20 »
ԹԻԱՊԱՐՏ Բ. » » 2.80 »
ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ » 1. »
ՊՈՒԼԿԱՐԱՅ ՊԱՏՄ. 50 օն.
ԻՐԱԽՈՒՆԲԻ հաւաքածոյ մէկ
տարուանը 12 ֆ.

Издатель: X Курбетян
Տպարան «Իրաւունք» Վառնա